ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ



- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 1-ի նիստում քննարկվեցին բնական գազի փոխադրման, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման և բնական գազի բաշխման սակագների սահմանման մասին հարցերը և սահմանվեցին հետևյալ սակագները՝ յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար (առանց ԱԱՀ-ի)՝
  - բնական գազի փոխադրման սակագինը՝ 8087.223 դրամ՝ մինչ այդ գործող 9099.354 դրամի փոխարեն,
  - գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 24.341 դրամ խմ՝ մինչ այդ գործող 23.533 դրամի փոխարեն,
  - բնական գազի բաշխման սակագինը՝ 13382.203 դրամ՝ մինչ այդ գործող 14989.73 դրամի փոխարեն:
- Հաշվի առնելով գազամատակարարման համակարգի կարգավորվող սակագների վրա ազդող դրական և բացասական բոլոր գործոնները՝ վերջնական սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման անհրաժեշտություն չի առաջացել և դրանք մնացել են անփոփոխ: Վերանայվել են միայն խոշոր ՋԷԿ-երին սահմանված սահմանաչափի շրջանակում վաճառվող բնական գազի սակագները:
- Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում 2026 թվականի օգոստոսի 1-ից:

Սակագների վրա ազդող հիմնական գործոնները

N	Գործոններ	Ազդեցության չափը
1.	Ներկրման և սպառման ծավալի, սպառման կառուցվածքի, ԱՄՆ դոլարի փոխարժեքի, գազի ջերմարարության փոփոխություն	*+ 2218.2 մլն դ*
2.	Գազամատակարար ընկերության մարժայի փոփոխություն	*+ 1960.0 մլն դ*
3.	Հաշվարկային և փաստացի հասույթների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման ենթակա գումարի փոփոխություն	*- 2869.5 մլն դ*
4.	ՀՀ կառավարության որոշումների հիման վրա իրականացվող ծրագրերով նախատեսված կարգավորման շրջանակում ստացված լրացուցիչ եկամուտ	*- 1308.7 մլն դ*
	ԸՆԴԱՄԵՆԸ (ազդեցությունը սպառողի սակագնի վրա)	**0 դ**

Գազամատակարարման համակարգում մատուցվող ծառայությունների սակագները (առանց ԱԱՀ-ի)

№	Անվանումներ	Չափի միավոր	Սակագին (01.08.2025-31.07.2026)	Սակագին (01.08.2026-31.07.2027)
1	Բնական գազի փոխադրման սակագին	*դրամ/ հազ. խմ*	9 099.354	8 087.223
2	Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	23.533	24.341
3	Բնական գազի բաշխման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	14 989.73	13 382.203